ՀՏԴ 330.8
Տնտեսագիտություն

Թաթուլ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ
Տնտեսագիտության դոկտոր, Երևանի պետական համալսարանի Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի պրոֆեսոր
E-mail: tatoulm@gmail.com

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅ ՄՏԱԾՈՂՆԵՐԻ ԴԵՐԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Բանալի բառեր՝ *Տնտեսական դիվանագիտություն, Մխիթար Գոշ, Հովհաննես Էրզնկացի, Դավիթ Անահաղթ, Գրիգոր Մագիստրոս, արդարադատություն, հավասարություն, տնտեսական զարգացում*

Т.Манасерян

РОЛЬ АРМЯНСКИХ МЫСЛИТЕЛЕЙ В ИСТОРИЧЕСКОЙ АРМЕНИИ В ФОРМИРОВАНИИ ОСНОВ ЭКОНОМИЧЕСКОЙ ДИПЛОМАТИИ

Профессиональное понимание экономической дипломатии включает определения и подходы, которые принципиально отличаются друг от друга с точки зрения сущности, целей и проблем экономической дипломатии. У каждого из них есть свое обоснование, и сложно оценить более или менее ценность того или иного подхода. Чтобы понять все это и применить его на более практической основе, необходимо учитывать особенности данного исторического периода, страны или региона, а также уроки прошлого, опыт, видения и цели будущих стратегий и программ развития.

Мы убеждены, что существует неправильное представление о том, что термин «дипломатия» применим главным образом к международным отношениям страны. Любая встреча с международными организациями, аккредитованными в Армении, консульствами и посольствами за рубежом, различными группами, посещающими Армению и Арцах, делегациями и отдельными лицами, способствующими прогрессу страны, обсуждению и переговорам, должна рассматриваться в контексте экономической дипломатии.

Ключевые слова: *Экономическая дипломатия, Мхитар Гош, Ованнес Ерзнкаци, Дэвид Анахт, Григор Магистрос, юстиция, равенство, экономическое развитие*

T. Manaseryan

THE ROLE OF ARMENIAN THINKERS IN HISTORICAL ARMENIA IN SHAPING THE FOUNDATIONS OF ECONOMIC DIPLOMACY

Professional understanding of economic diplomacy includes definitions and approaches that differ significantly from the essence, goals, and issues

of economic diplomacy. Each of them has its own rationale and it is difficult to estimate the more or less value of this or that approach. In order to understand all this, and to apply it in a more practical way, it is necessary to take into account the peculiarities of the given historical period, country or region, as well as the lessons of the past, experience, visions and goals of future development strategies and programs.
We are convinced that there is a misconception that the term "diplomacy" is applicable mainly to the country's foreign relations. Any meeting with international organizations accredited in Armenia, foreign embassies and consulates, various groups visiting Armenia and Artsakh, delegations and individuals contributing to the country's progress, discussion and negotiations should be considered in the context of economic diplomacy.
***Keywords:**. Economic Diplomacy, Mkhitar Gosh, Hovhannes Yerznkatsi, David Anhaght, Grigor Magistros, Justice, Equality, Economic Development*

Տնտեսական դիվանագիտության մասնագիտական ընկալումը ներառում է տնտեսական դիվանագիտության էությանը, նպատակներին և խնդիրներին առնչվող միմյանցից էականորեն տարբերվող սահմանումներ և մոտեցումներ: Դրանցից յուրաքանչյուրն ունի իր հիմնավորումը, և դժվար է գնահատել այս կամ այն մոտեցման առավել կամ նվազ արժեքը[1]: Այդ ամենն ընկալելու, առավել ևս գործնականում կիրառելու նպատակով անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես տվյալ պատմական ժամանակաշրջանի, երկրի կամ տարածաշրջանի յուրահատկություններն, այնպես էլ անցյալի դասերը, փորձը և ապագային միտված զարգացման ռազմավարությունների և ծրագրերի տեսլականներն ու թիրախները:

Մեր համոզմամբ՝ թյուր կարծիք կա առ այն, որ «դիվանագիտություն» եզրույթը կիրառելի է հիմնականում երկրի արտաքին հարաբերություններում: Հայաստանում հավատարմագրված միջազգային կառույցների, արտերկրի դեսպանատների և հյուպատոսությունների, Հայաստան և Արցախ այցելող տարբեր խմբերի, պատվիրակությունների և անհատների հետ երկրի առաջընթացին նպաստող ցանկացած հանդիպում, քննարկում և բանակցություն պետք է դիտարկել հենց տնտեսական դիվանագիտության համատեքստում:

---

[1] *Economic Diplomacy, Stephen Woolcock and Nicholas Bayne, The Oxford Handbook of Modern Diplomacy, Edited by Andrew F. Cooper, Jorge Heine, and Ramesh Thakur, Print Publication Date: Mar 2013, Subject: Political Science, International Relations, Political Economy, Online Publication Date: Aug 2013, Published: 27 March 2018*
*A comparative study of the Belt and Road Initiative and the Marshall plan Simon Shen & Wilson Chan, Palgrave Communications volume 4, Article number: 32 (2018), https://www.nature.com/articles/s41599-018-0077-9; Economic diplomacy, https://www.diplomacy.edu/courses/Economic; Economic Diplomacy as Impetus for Domestic Reforms, https://www.diplomacy.edu/blog/economic-diplomacy-impetus-domestic-reforms; Conclusion Power Shift: Economic Diplomacy on the Rise*In: *Economic Diplomacy* Author: *Maaike Okano-Heijmans, Page Count: 167–185, DOI: https://doi.org/10.1163/9789004255432_008.*

Անկախ նրանից, թե ինչպես է տեսականորեն ընկալվում տնտեսական դիվանագիտությունը տարբեր երկրներում, կարևոր է հստակեցնել տնտեսական դիվանագիտության էությունը, դրա խնդիրները և նպատակները յուրաքանչյուր երկրի համար՝ հաշվի առնելով նաև առկա պայմանները և զարգացման միտումները:

Մեր ընկալմամբ՝ տնտեսական դիվանագիտությունը Հայաստանում, Արցախում և Սփյուռքում առկա մտավոր և նյութական ռեսուրսների հասցեական, նպատակային և արդյունավետ օգտագործումն է՝ ի շահ երկրի տնտեսական անվտանգության ապահովման, ազգաբնակչության կյանքի որակի բարելավման և այդ նպատակով Հայաստանին և հայությանը ծառայող մրցունակ մարդկային կապիտալ ձևավորման և իրացման միջոցով:

Նախ՝ կարևոր է տնտեսական դիվանագիտությունը դիտարկել երկու հարթություններում՝ արտաքին և ներքին: Եթե արտաքին տնտեսական դիվանագիտության մեջ կարելի է առանձնացնել պետական, ժողովրդական, խորհրդարանական, գործարար բաղադրիչները, ապա ներքին տնտեսական դիվանագիտության մեջ կարելի է ներառել հետևյալ տեսակները, խմբերը և շերտերը.

- հանրային դիվանագիտություն,
- երկրում հավատարմագրված միջազգային կազմակերպությունների,
- երկրում հավատարմագրված արտերկրի դեսպանատների,
- երկրում գործող օտարերկրյա կապիտալով ընկերությունների,
- երկիր այցելող արտերկրի ֆիզիկական և իրավաբանական անձանց,
- արտահանմամբ և ներմուծմամբ մասնագիտացած ֆիզիկական և իրավաբանական անձանց,
- օտարերկրյա կապիտալով և խառը ներդրումային ընկերությունների,
- Հայաստանը միջազգային հարթակներում ներկայացնող պետական, ոչ պետական, մասնավոր, հասարակական կառույցների,
- տարածաշրջանային համագործակցության ձևաչափով Հայաստանը ներկայացնող,
- այլ անհատների և իրավաբանական անձանց հետ,
- որոշակի նպատակների և ծրագրերի իրագործմանը միտված բանակցային և այլ հարաբերություններ:

Ակնհայտորեն տնտեսական դիվանագիտությունը նպատակ ունի օգտագործել ավանդական դիվանագիտության և գործարար համայնքի կառույցների հնարավորությունները՝ ինչպես արտաքին տնտեսական, այնպես էլ քաղաքական նպատակներին հասնելու համար: Երկրում և արտերկրում իր տնտեսական շահերը պահպանելու նպատակով պետությունը օգտագործում է իր ներքին ռեսուրսները, դիվանագիտության ավանդական տեխնիկան և մեթոդները, դրա ենթակառուցվածքն ու գործիքները, ինչպես նաև ժամանակակից տեղեկատվական գործիքները՝

հրապարակումների և ելույթների միջոցով[1]: Քաղաքական և տնտեսական խնդիրների լուծման հարցում առաջացած անորոշությունն ուժեղացնում է ուժային կառույցների զգայունությունը և առաջ բերում մյուս կողմերի կամ միջազգային հանրության համապատասխան արձագանքը:

Ժամանակակից տնտեսական դիվանագիտությունն ավելի շատ է կիրառում ինչպես շահադրդման, այնպես էլ տնտեսական արդարության սկզբունքներն ու վիճակագրական ցուցանիշները և հիմնավոր փաստարկները: Ու թեև գնալով կատարելագործվում են կիրառվող կառուցակարգերն ու գործիքները՝ տնտեսական դիվանագիտության սկզբունքային մոտեցումներն ու մեթոդները ձևավորվել են դարերի ընթացքում և հղկվել պատմական իրադարձությունների հորձանուտում:

Մեր բազմամյա ուսումնասիրությունները վկայում են, որ Հայոց պետականության համար բախտորոշ 5-6-րդ դարերում հենց այս մոտեցումներով է առաջնորդվել Դավիթ Ներգինացին /Դավիթ Արմենիոսը/, ում հռչակեցին **Դավիթ Անհաղթ**՝ շնորհիվ հանրային և ավելի սեղմ շրջանակներում փիլիսոփայական վեճերում իր փաստարկված տեսակետներով ձեռք բերած շարունակական հաղթանակների: Նրա դիտարկմամբ՝ բոլոր գիտությունները բաժանվում են երկու մեծ խմբի՝ բնական և հասարակական[2]: Դեպի մարդն ուղղված տնտեսական գիտությունը, մարդկանց հասարակական հարաբերություններն ու հետաքրքրությունները բնորոշում են տնտեսական տեսությունը որպես հասարակական գիտություն: Անհաղթը գտնում էր, որ փիլիսոփայությունը կապված է մյուս բոլոր գիտությունների հետ, հատկապես տնտեսությունն ուսումնասիրող գիտության: Նրա կարծիքով՝ փիլիսոփայության հիմքի վրա

---

[1] *From Club to Network Diplomacy, Jorge Heine, The Oxford Handbook of Modern Diplomacy, Edited by Andrew F. Cooper, Jorge Heine, and Ramesh Thakur, Print Publication Date: Mar 2013, Subject: Political Science, International Relations, Political Institutions, Aug 2013, DOI:10.1093/oxfordhb/9780199588862.013.0003, https://www.oxfordhandbooks.com/view/10.1093/oxfordhb/9780199588862.001.0001/oxfordhb-9780199588862-e-3; Power Shift: Economic Realism and Economic Diplomacy on the Rise, Maaike Okano-Heijmans, pp.269-286Okano-Heijmans M., Okano-Heijmans M. (2012) Power Shift: Economic Realism and Economic Diplomacy on the Rise. In: Fels E., Kremer JF., Kronenberg K. (eds) Power in the 21st Century. Global Power Shift (Comparative Analysis and Perspectives). Springer, Berlin, Heidelberg. https://link.springer.com/chapter/10.1007/978-3-642-25082-8_14; Bounded Rationality and Economic Diplomacy: The Politics of Investment Treaties in Developing Countries. By LAUGE N. SKOVGAARD POULSEN Bounded Rationality and Economic Diplomacy: The Politics of Investment Treaties in Developing Countries. By Lauge N Skovgaard Poulsen. Cambridge University Press, Cambridge, 2015. 263, p. Mavluda Sattorova, British Yearbook of International Law, Volume 87, Issue 1, 2017, Pages 295–297, https://doi.org/10.1093/bybil/bry009, 30 May 2018; The Changing Nature of Diplomacy, Andrew F. Cooper, The Oxford Handbook of Modern Diplomacy, Edited by Andrew F. Cooper, Jorge Heine, and Ramesh Thakur, Print Publication Date: Mar 2013, Subject: Political Science, International Relations, Political Institutions Online Publication Date: Aug 2013, DOI: 10.1093/oxfordhb/9780199588862.013.0002.*

[2] *Մեն Արևշատյան «Դավիթ Անհաղթը՝ հին Հայաստանի ականավոր փիլիսոփա», «Հայաստան» հրատ. Երևան, 1980, էջ 32:*

սկսել են ձևավորվել և զարգանալ տնտեսական գիտությունը և քաղաքագիտությունը[1]:

Նա գտնում էր, որ հողերի և ունեցվածքի բաժանման հետ է կապված փիլիսոփայության այնպիսի կարևորագույն մասը, ինչպիսին տրամաբանությունն է: Դրա հետ մեկտեղ, նա կարևոր նշանակություն էր տալիս տնտեսության մեջ արդարության սկզբունքին: Հայտնի է, որ ժամանակակից տնտեսական դիվանագիտության մեջ գոյություն ունեն այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են տնտեսական արդյունավետությունը և սոցիալական արդարությունը: Բացի այդ գործնականում ավելի շատ կիրառվում են ոչ այնքան «ազատ առևտուր» և «ազատ մրցակցություն» տերմինները, որքան դեռևս Դ.Անհաղթի կողմից կարևորվող «արդար առևտուր» և «արդար մրցակցություն» հասկացությունները: Եթե «արդյունավետությունը» ենթադրում է հասարակության կողմից սահմանափակ ռեսուրսների օգտագործումից ստացվող առավելագույն բարիքները, ապա «արդարությունը» նշանակում է, որ ստացված բարիքները բաժանվում են հասարակության բոլոր անդամների միջև: Այլ խոսքերով՝ արդյունավետությունը տնտեսական կարկանդակ է, իսկ արդարությունն այն մասերի բաժանելու միջոց[2]: Արդարություն տերմինն Անհաղթը կապում էր եկամտի, ունեցվածքի և հողերի արդար բաժանման հետ[3]: Իսկ ժամանակակից տնտեսական դիվանագիտության մեջ արդյունավետությունն ու արդարությունը կոնֆլիկտի մեջ են մտնում. որքան մեծ է կարկանդակը, այնքան քիչ է արդարութունը, և հակառակը, որքան արդար է բաժանված, այնքան քիչ է կարկանդակը: Դեռ Վոլտերն էր հիշեցնում, որ մենք վաղուց չենք ապրում այն ոսկե դարում, երբ մարդիկ ծնվում էին հավասար և հավասար բաժին ստանում բերրի հողերի հյութալի պտուղներից[4]: Մարդիկ միանգամայն տարբերվում են իրարից՝ աշխատասիրությամբ, ակտիվությամբ, ընդունակություններով, կրթությամբ, եկամուտը գրագետ տնօրինելու ունակությամբ: Հետևաբար նրանք չեն կարող աշխատել, վաստակել և ապրել միանման: Սրանից էլ կարող ենք եզրակացնել, որ ճիշտ չի լինի, եթե հասարակության բոլոր անդամները կարկանդակից հավասար բաժին ստանան: Յուրաքանչյուրը պետք է ստանա այնքան, որքան արժանի է ստանալու: Ինքներս մտածենք, ինչ կլինի, եթե ամեն մեկը, անկախ աշխատանքի բնույթից, ստանա միևնույն աշխատավարձը: Օրինակ՝ պահակն ու մանկավարժը նույն աշխատավարձը

---

[1] *Սահմանք իմաստասիրութեան: Համահավաք քննական բնագիրը և ռուսերեն թարգմանությունը՝ Ս. Արևշատյանի, Երևան, 1960թ., էջ 12-15:*

[2] ***Аревшатян С. С.,*** *Формирование философской науки в Древней Армении (V - VI вв.), Ереван, 1973.*
Философия Давида Непобедимого (сборник), Москва 1984.

[3] ***Բրուտյան Գ. Ա.,*** *Դավիթ Անհաղթի ուսմունքը տրամաբանության մասին, Երևան, 1980թ., էջ 57-61:*

[4] ***Вольтер****, Социально-политические взгляды,* http://www.solecity.ru/philosophy/volter

ստանան: Չէ՞ որ մանկավարժ դառնալու համար մարդը բավականին ժամանակ, էներգիա և գումարներ է վատնել, իսկ պահակ դառնալու համար հատուկ ունակություններ պետք չեն: Հետևաբար նրանց աշխատավարձերն էլ պիտի տարբեր լինեն[1]:

Դավիթ Անհաղթը գտնում էր, որ մարդը պետք է օգնի մյուսներին, այլ ոչ թե գործի մեկուսացված: Նա կարծում էր, որ յուրաքանչյուր մարդ կարող է երջանիկ լինել միայն այն դեպքում, երբ նա լինի արդարացի[2]: Սովորել և ավարտել է Ալեքսանդրիայի Օլիմպիոդորոս Կրտսերի փիլիսոփայական դպրոցը, տիրապետել հանրային հարաբերությունների, դիվանագիտության և բանակցությունների արվեստին, ինչը թույլ է տվել դասավանդել նույն կրթօջախում և կրթել բազմաթիվ դիվանագիտների[3]:

Տարբեր ժամանակների դինամիկայի տվյալների բացահայտման և տնտեսական երևույթների վերլուծության և բանակցությունների մեջ Դավիթ Անհաղթն ուշադրություն է դարձրել փաստացի տվյալների օգտագործման կարևորությանը: Ըստ էության, Դավիթ Անհաղթն առաջինն է խոսել վիճակագրության մասին և հիմնադրել է հին հայկական փիլիսոփայության աշխարհիկ ուղղությունը[4]:

Տնտեսական դիվանագիտություն, ինչպես հայտնի է, ենթադրում է երկրի անվտանգության ապահովմանն ու տնտեսության մրցունակության բարձրացմանը միտված ինչպես գործնական քայլերի իրականացում, այնպես էլ հիշյալ նպատակներին միտված արդյունավետ բանակցությունների համար անհրաժեշտ ներուժի ձևավորում և դրա իրացում: Հենց այս նպատակներն է հետապնդել 11-րդ դարում Հայաստանի հասարակական և քաղաքական, պետական կյանքում կարևոր դերակատարություն ունեցած **Գրիգոր Մագիստրոսը:** Նա իր կյանքի հասուն տարիներին մասնակից է դառնում, 1045թ. Անիի դրամատիկ իրադարձություններին, որից հետո նպատակ է դնում երկիրը հզորացնել ինչպես ավանդական՝ ռազմական ճանապարհով, այնպես էլ օգտագործելով դիվանագիտական, մասնավորապես հոգևոր, մշակութային և տնտեսական դիվանագիտության տարբեր հնարավորությունները: Նա նպատակ է դրել շեն ու նորոգ դարձնել երկիրը, ինչը հետևողականորեն իրագործել է՝ հատկապես զբաղվելով մշակութային,

---

[1] *Մատենագրութիւնք, Վենետիկ, 1932թ.:*

[2] ***Чалоян В. К.,*** *Философия Давида Непобедимого, Ереван, 1946, стр. 92-93.*

[3] ***Արևշատյան Ս. Ս.,*** *Դավիթ Անհաղթը Հին Հայաստանի ականավոր փիլիսոփա, Երևան, 1980թ.; Դավիթ Անհաղթը՝ Հին Հայաստանի մեծ փիլիսոփան (ժողովածու), Երևան, 1983թ., էջ 23-25:*

[4] *Մեկնութիւն ի Վերլուծականն Արիստոտելի: Համահավաք քննական բնագիրը և ռուսերեն թարգմանությունը՝ Ս. Արևշատյանի, Երևան, 1967թ.; Դավիթ Անհաղթ: Մատենագիտական ցանկ, Երևան, 1980թ.էջ 11-17:*

քաղաքական և պետական բազմաթիվ ու բազմաբնույթ գործերով: Այդ բոլորի մեջ նա ցուցաբերել է խնամք ու սրտացավություն[1]:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատմական Հայաստանում եկեղեցուն հատկացված էր բացառիկ դեր՝ երկրի կրթական, գիտական, մշակութային, տնտեսական և սոցիալական կյանքում Գրիգոր Մագիստրոսն իրեն ամբողջովին նվիրել է եկեղեցաշինությանն ու եկեղեցու դերով պայմանավորված պետության հզորացման և արտաքին կապերի զարգացման գործին: Դեռ 1013 թվականին՝ ընդամենը 23-25 տարեկանում նա սկսել է Հավուց Թառի Ամենափրկիչ եկեղեցու կառուցումը, 1031թ. ձեռնարկել է Բջնիի Աստվածնի եկեղեցու շինարարությունը, 1051թ. Կեչառիսի եկեղեցու գավիթից հետո վերակառուցել է Սուրբ Լուսավորչի միագմբեթ եկեղեցին: Մագիստրոսը չէր կարող չմտածել երկրի ռազմական հզորության մասին, որն սկսել էր իրենից շատ առաջ: Թեև Հայաստանում տիրապետության հասնելու նպատակով կայսրությունը գործել է Անիի անկումից դեռ հարյուր տարի առաջ՝ 949թ. զավթելով Կարինը, այնուհետև շարունակաբար գրավելով այլ քաղաքներ ու գավառներ, 969թ տիրանալով Տարոնին, 1016թ., Վանին, 1025թ.՝ Հարքին ու Բասենին: Սակայն երկրի անկախությունը գնալով թուլանում էր, և վերահաս կործանումն անխուսափելի էր դառնում: Դրությունը ճգնաժամային էր, և ելք էին փնտրում բոլորը: Մագիստրոսը նրանց մեջ ամենաառաջինների թվում էր: Երբ 1023 թ. երևաց Գիսաստղը, իսկ 1036թ. եղավ Արևի խավարումը, 1037թ. Մագիստրոսը Հովհաննես Սմբատ կայսեր հրամանով Բջնիում փակեց Կաթողիկոսին: Մինչ այդ Զորովանքում ապաստանած Պետրոսը վերջապես պետք է վերադառնար Անի, սակայն ենթարկվում է յուրատեսակ կալանքի 1 տարի, և հինգ ամիս նա մնում է Բջնիում և իր բնատուր խելքի ու իմաստության շնորհիվ բարեկամանում Գրիգորի հետ: Շուտով եկեղեցու հայրերն ապստամբում են և աթոռից հեռացնում Սանահինի հռչակավոր իմաստասեր, այդ ժամանակ կաթողիկոս ձեռնադրված Դիոսկորոսին: Պետրոսը մեկնում է Անի և շարունակում է կրել հայրապետական հանդերձներն ու գավազանը[2]:

Հարկ է նկատել, որ Գ. Մագիստրոսը Սպարապետ Վասակ Պահլավունու որդին էր և հորեղբոր՝ Վահրամ Պահլավունու և նրա կուսակիցների հետ պայքարել է ներքին և արտաքին թշնամիների դեմ, միաժամանակ դիվանագիտական բոլոր հնարավոր միջոցներով վնասազերծել երկրի դեմ ծրագրվող բազմաթիվ վտանգավոր ասպատակություններ և նպաստել Բագրատունիների գահի ամրապնդմանը: Նա բազմանդամ ընտանիքի հայր էր, գերդաստանի մեծերից մեկը՝ Վահրամ Պահլավունուց հետո: Բացի իր բոլոր կարևոր և երկրորդական գործերից՝ Գ.Մագիստրոսը շարունակում էր

---

1 «Ով ով է: Հայեր» հանրագիտարան, հատոր առաջին, Դավիթ Անհաղթ, գլխ. խմբ. Հովհ. Այվազյան, Հայկական հանրագիտարան հրատ., Երևան, 2007:

*2 **Խաչերյան Լ.,** Գրիգոր Պահլաւունի Մագիստրոս (985-1058 թթ). Կեանքն ու գործունեութիւնը, Լոս Անջելես, 1987, էջ 127-132:*

սնել ու դաստիարակել իր երեխաներին, որոնք ութն էին՝ չորս որդի և չորս դուստր: Նրա որդիները դարձան ժամանակի նշանավոր քաղաքական և կրոնական գործիչներ: Օրինակ՝ 1065-1105թթ. Ամենայն հայոց կաթողիկոս է ընտրվել Գր. Մագիստրոսի որդին՝ Գրիգոր 2-րդ Պահլավունին, որը վայելում էր նաև բյուզանդացիների վստահությունը: Բազմաթիվ թելերով կապված է եղել հայ կրթական, գիտական, մշակութային կյանքին և մեծ ներդրում ունի հայ իրականության ու արվեստի զարգացման ամենատարբեր բնագավառներում: Իր հիմնադրած ճեմարանում դասավանդել է ճարտասանություն, բանակցային արվեստ, փիլիսոփայություն, քերականություն, մաթեմատիկա և այլն:

Իր հորեղբոր՝ Վահրամ Պահլավունու հետ բանակցել է բյուզանդացիների հետ և օգնել է Գագիկ Բ թագավորին՝ պահպանելու Բագրատունիների թագավորությունը: Անիի թագավորությունը պահպանելու նպատակով Գ.Մագիստրոսը դարձյալ օգտագործում է իր դիվանագիտական հնարավորությունները և կապերը՝ 1045թ. մասնակցելով Կոստանդնուպոլսում Կոստանդին կայսեր հետ Գագիկ Բ-ի վարած բանակցություններին[1]: Կանխազգալով հայկական թագավորության անկումը՝ իր տիրույթները հանձնել է Բյուզանդիային, փոխարենը կարողացել է կալվածքներ, հողեր և գյուղեր ստանալ Հարավային Հայաստանում և Միջագետքում: Գր. Բյուզանդիայի կայսրը նրան տվել է Մագիստրոսի պալատական և ռազմական բարձր տիտղոս, իսկ 1048թ. նրան տրվել է Հարավային Հայաստանի և Միջագետքի կուսակալի /նահանգապետի/ պաշտոնը: Հատկանշական է, որ Գ. Մագիստրոսի կուսակալության սահմանների մեջ էին մտնում ոչ միայն Միջագետքը, ինչը կարևոր ռազմավարական նշանակություն ուներ, այլև Վասպուրականը, Տարոնը և հարավ-արևմտյան Հայաստանի շատ մարզեր, ինչպես նաև արևելյան սահմանները, որոնք նա պաշտպանել է թուրք սելջուկներից և հիշյալ տարածքներում ծավալուն շինարարական և վերականգնողական աշխատանքներ ծավալել: Դիվանագիտական, այդ թվում՝ տնտեսական դիվանագիտության արվեստին տիրապետելով՝ Գ. Մագիստրոսին հաջողվել է համատեղել իր՝ Բյուզանդիայի պետության կողմից իրեն վստահված բարձր պաշտոնը՝ Հայաստանի պաշտպանության և զարգացման գործի հետ: Մագիստրոսի վաստակը հնում առաջին հերթին գնահատվել է այն հանգամանքով, որ Հայաստանում և արտերկրում նրան ճանաչել են իբրև ռազմական գործիչ, դիվանագետ, գիտնական և մանկավարժ: Կրթությունն ստացել է Անիի դպրոցում, այնուհետև՝ Կոստանդնուպոլսում: Նրան Հայաստանում գնահատել են նաև իբրև հասարակական ակնառու գործիչ և ազդեցիկ մտավորական:

---

[1] ***Մխիթարյան Մ****, Գրիգոր Մագիստրոսի կյանքը և գեղարվեստական ժառանգությունը, Ե., 2001, էջ 28:*

Գիտակցելով ամեն մի բնակավայրի, ամրության և մշակութային օջախի դերը երկրի հետագա բարգավաճման գործում՝ Գր. Մագիստրոսը լայն շինարարական գործունեություն է ծավալել, կազմակերպել է բազմաթիվ շինությունների ու բերդերի կառուցումը և վերակառուցել հները: Կառուցել է նաև մշակութային և կրթական նշանակություն ունեցող հուշարձաններ, որոնք առ այսօր մեծ արժեք ունեն ժողովրդի, մշակույթի և պատմության համար: Դա թելադրվում էր ժամանակի պահանջով: Առաջին հուշարձանը, որը նա թողել է սերունդներին, 1013թ. կառուցված Հավուց Թառի Ամենափրկիչ եկեղեցին է: Այդ գլուխգործոցը տուժել է երկրաշարժից և դեռևս վերակառուցված չէ[1]:

Մանկավարժության խնդիրներին Մագիստրոսն անդրադառնում է տարբեր առիթներով: Մագիստրոսի կարծիքով՝ ուսումնական համակարգը պետք է լինի հետևյալ կերպ և ընդգրկի իր մեջ դրա չորս տեսակները՝ առասպելավարժություն և Հին ու Նոր կտակարանների ուսուցում, քերականություն, ներառյալ թարգմանչական գործ, հռետորական և բանակցությունների արվեստ, «պլատոնական», «արիստոտելական», «պիթագորական» ուսմունքները: Այս ամենն, իր հերթին, բաժանվում է երկու մասի կամ ուսուցանվում են երկու աստիճանով: Առաջինը պարտադիր ուսուցումն է, իսկ երկրորդը՝ բարձրագույնը: Երկրորդ աստիճանը կամ բարձրագույն ուսումը լրացվում է եռյակ արվեստներով, այն է քերականություն, ճարտասանություն և դիալեկտիկա: Նրա կարծիքով, ովքեր որ ուսման փուլը չեն անցել, չեն կարող սովորել երկրորդը, հետևաբար աստվածաբանությամբ զբաղվելու իրավունք չունեն, քանի որ դա անել ի վիճակի չեն լինի:

Իրականում Գ. Մագիստրոսը պահանջում էր գիտությամբ հասնել կատարյալին: Իսկ այդ կատարյալը մարմնավորված է Աստծու Էության մեջ: Նա այն համոզմունքն ուներ, որ սեփական մշակույթը պետք է հարստացվի և հագեցվի նաև հարևան և այլ ժողովուրդների մշակույթներին ծանոթանալով: Դրա համար պետք է թարգմանել նրանց արժեքավորը՝ եղածին ավելացնելով և սեփականը: «Քանզի մեր ոչ է սովորութին գողաբար զայլոցն իմաստասիրութին խորթս մեզ ստեղծանել»:

Մագիստրոսը շատ վաղ հասակից սկսում է զբաղվել գիտությամբ և արվեստներով: Հասկանալի է նաև Մագիստրոսի մտահոգության պատճառը. նա շահագրգռված է, որ ուսումնական գործը կատարեն հմուտ և զարգացած մանկավարժներ: Դրանցից մեկը, օրինակ, Հովհաննես Կոզեռն էր: Բարդ է և Մագիստրոսի աշխարհայացքային համակարգը ու երբեմն խիստ հակասական[2]: Նրա համար կյանքն ավարտ չունի: Ակնհայտ է, որ Մագիստրոսը ոգեշնչվել է Տիրոջ կերպարով: Նրա համար Հիսուսը կենդանի և գործող գոյ է, որի էությունից ամեն խզում և նահանջ է դեպի անխուսափելի

---

[1] *Տաղասացութիւնք Գրիգորի Մագիստրոսի Պահլավունւոյ, Վենետիկ, 1868:*

[2] ***Չալոյան Վ.****, Հայոց փիլիսոփայության պատմություն, Երևան, 1975, էջ 134-139:*

մահ ու աղետալի կործանում: Նա օգնում է մարդկանց, քանի որ գթում է նրանց, զգում նրանց ծանր կացությունը, սակայն փոխարենը ոչ մի հատուցում չի պահանջում:

Գր. Մագիստրոսը իր մեջ կրում է իր ժամանակի հոգեբանությունը և աշխարհընկալումը: Նա մեծ մտածող էր: Աստծո գոյության ընդունված և աներկբայելի հարցի վերաբերյալ հայացքներով հարում է նորպլատոնական ուսմունքին՝ հարազատ մնալով Պլատոնին և Դավիթ Անհաղթին: Միաժամանակ Մագիստրոսը միանգամայն աշխարհիկ մարդ է[1]: Նա 11-րդ դարի հետ կապված էր սոցիալական, քաղաքական և հոգեբանական բազմաթիվ հանգույցներով: Ունենալով գիտելիքների գրեթե անսպառ պաշարներ և տիրապետելով ժամանակի գիտության համարյա բոլոր ճյուղերին՝ բժշկագիտությունից մինչև մաթեմատիկա և աստղագիտություն՝ նա հավասար իրավունքով համարվում է և գեղագետ: Գեղագետ, որը աշխարհին նայում է միանգամայն նոր հայացքով: Վերածնության մյուս մեծերի պես Մագիստրոսն էլ գնում է դեպի ազգային և համաշխարհային մշակույթի ակունքները՝ հայ կյանքում վերահաստատելով անտիկ ավանդները: Նա հիացած էր Հոմերոսի հանճարով և հայ ընթերցողի համար վերծանել է Պլատոնի և Արիստոտելի երկերը, որոնցում ի հայտ են գալիս անտիկ ու աստվածաշնչյան այնպիսի կերպարներ, որոնք պայքարում են մարդկային ամենաբարձր իդեալների հաղթանակի ու հաստատման համար:

Հայ մեծ գիտնական, օրենսդիր, առակագիր, մանկավարժ, հասարական գործիչ **Մխիթար Գոշի** դերը մեծ է եղել ոչ միայն Հայաստանի, այլև հարևան երկրների, հետագայում՝ եվրոպական շատ երկրների օրենսդրական դաշտի կարգավորման, այդ թվում՝ տնտեսական օրենքների մշակման և կիրարկման գործում: Նրա կողմից ներդրած կանոնները վերածվել են միջազգային իրավական նորմերի, որոնք առ այսօր լայնորեն կիրառվում են նաև տնտեսական դիվանագիտության մեջ: Նա սովորել սկսել է ծննդավայրում: 1188թ. Հայոց աշխարհի Կայեն գավառում, որի տարածքը համապատասխանում էր ներկայիս Իջևանի տարածաշրջանին, տեղի ունեցավ մեծ երկրաշարժ: Շատ ավերածություններ եղան, ավերվեցին նաև Գետիկ գետի ափին ընկած գյուղը և նրա մոտ գտնվող համանուն վանքը, որը հետագայում դարձավ միջնադարյան Հայաստանի կրթական ու մշակութային հայտնի կենտրոններից մեկը: Միջնադարյան հայ մշակույթի ականավոր ներկայացուցիչներից էր նա: Ուսում առնելով իր ծննդավայրում՝ Գանձակ քաղաքում, գիտելիքների մեջ ավելի խորանալու նպատակով նա մեկնում է Կիլիկյան Հայաստան, ուր այդ ժամանակ վերելք էին ապրում հայ մշակույթն ու գիտությունը: Վերադառնալով հայրենիք՝ նա մի շարք վայրերում դպրոցներ է հիմնվում, ապա հաստատվում Գետիկ, երկրաշարժից հետո՝ Նոր Գետիկ վանքում: Շուտով նրա իմաստունության համբավն այնքան է տարվածում, որ

---

[1] *Մենևիշյան Գ., Գրիգոր Մագիստրոսի «Գամագտականի» ամբողջական լուծումը, Վեն., 1912:*

նրան աշակերտելու են գալիս նույնիսկ հեռավոր վայրերից և այն էլ արդեն ուսյալ մարդիկ: Նա մեծ հեղինակություն էր վարում ոչ միայն մտավորականների, այլև ժամանակի քաղաքական ու պետական գործիչների շրջանում: Նրան անվանում էին «Հոչակավոր», «Աշխարհալույս», «իմաստուն և հեզ»[1]: Ժողովուրդն այնպիսի ակնածանք էր տածում նրա հանդեպ, որ նրա մահից հետո Գետիկ վանքն անվանեց Գոշավանք: Հայ միջնադարյան ճարտարապետության այդ հրաշալի կոթողն այսօր էլ կանգնում է Իջևանի տարածաշրջանի Գոշ գյուղի մոտ՝ բնության գեղատեսիլ մի անկյունում:

Մանկավարժական և հասարակական քաղաքական գործունեությանը զուգընթաց՝ Մխիթար Գոշը նաև ստեղծագործել է: Նրա երկերի թվում առանձնանում են «Դատաստանագիրքը», ավելի ճիշտ՝ «Գիրք Դատաստանին» և առակների ժողովածուն:

Մ.Գոշի ժամանակներում իր պետականությունը կորցրած հայ ժողովրդի համար ստեղծվել էին վերականգնելու որոշ նախադրյալներ: Ահա այս պայմաններում էր, որ մեծ հայրենասերը ձեռնարկում է «Դատաստանագրքի» ստեղծումը, որի նպատակը պետք է լիներ բարձրացնել հայ ժողովրդի ազգային-ազատագրական ոգին, երկրի ներսում ապահովել արդարադատությունն ու խաղաղություն, դրանով իսկ բոլոր ուժերը միավորել անկախություն ձեռք բերելու և հայկական կենտրոնացված թագավորությունը վերականգնելու համար: Ըստ որում, նա ավելի հակված էր վերականգնելու թագավորությունը ոչ այնքան բռնի ուժով, որքան դիվանագիտորեն, կարգ ու կանոն հաստատելով, սոցիալական արդարության սկզբունքը կիրառելով կյանքի բոլոր ոլորտներում, ինչպես նաև հզորացնելով երկրի տնտեսությունն ու արտաքին տնտեսական կապերը:

«Դատաստանագիրքը», որը հեղինակի երկար տարիների տքնաջան աշխատանքի արդյունքն է , պարունակում է 254 հոդված: Թեև այն կոչված էր պաշտպանելու տիրող դասակարգի շահերը, սակայն, հանուն արդարության, Մ. Գոշը սահմանազատում է թագավորի, իշխանների և ժողովրդի իրավունքները, պատիժներ է սահմանում հոգևոր և աշխարհիկ այն տերերին, ովքեր ապօրինի էին վերաբերվում հասարակ ժողովրդի հետ, տանջում էին շինականներին, ընչաքաղց էին, կաշառակեր և տգետ: Նրա առաջադեմ հայացքներն այդ ժամանակաշրջանի համար բացառիկ երևույթ էին: Նա պաշտպանում էր կնոջ շահերը, հատուցումներ նախատեսում այն ամուսիններին, ովքեր ստորացնում, ծեծում էին կանանց: Պատիժներ էին սահմանվում նաև այն երեխաներին, ովքեր քարկոծում կամ վնասներ էին հասցնում միմյանց[2]:

Տնտեսական դիվանագիտության մեջ առանցքային համարվող ժողովուրդների և մարդկանց հավասարության գաղափարը Գոշն

---

[1] *«Ով ով է: Հայեր» հանրագիտարան, հատոր երկրորդ, Մխիթար Գոշ, գլխ. խմբ. Հովհ. Այվազյան, Հայկական հանրագիտարան հրատ., Երևան, 2007:*

[2] ***Մխիթար Գոշ**, «Դատաստանագիրք» Երևան, 2001 թ.:*

ամրապնդեց օրենքով և բոլոր խավերի համար սահմանեց հավասար պատիժ: Նա գտնում էր, որ հատուցումն ու պատիժը պետք է համապատասխանեն հասցված վնասին: Սա առաջադիմական սկզբունք էր. Չէ որ այն ժամանակ ամենափոքր իսկ զանցանքի համար մարդուն կարող էին նույնիսկ մահապատժի ենթարկել իր Դատաստանագրքով Գոշը հանդես էր գալիս որպես մեծ մարդասեր: Դարեր շարունակ այն իբրև օրենսգիրք է գործածվել ինչպես բուն Հայաստանում, այնպես էլ հայկական բազմաթիվ գաղթավայրերում:

«Գիրք դատաստանին» նաև թարգմանվել է մի շարք օտար լեզուներով, այդ թվում՝ անգլերեն, իսպաներեն, լեհերեն, ռուսերեն և այլն: Հայ գեղարվեստական գրականության մեծարժեք գործերից են Մխիթար Գոշի առակները: Ժողովածուն բաղկացած է 19 առակից, որոնց հերոսները ներկայացնում էին երկնային մարմինների, երկրի, ծառերի, խոտերի, ծաղիկների, լեռների, գետերի, կենդանիների, թռչունների, մարդկանց տեսքով: Այդ առակներն ունեին դաստիարակչական նշանակություն: Իր այլաբանական հերոսների միջոցով Գոշը դրվատում է մարդկային առաքինությունները, ծաղրում հիմարությունը, տգիտությունը ու վախկոտությունը, խարազանում է չարիքը[1]:

Մի շարք առակներում արտահայտված է հեղինակի խաղաղասիության ձգտումը, ինչը տնտեսական դիվանագիտության հիմնարար սկզբունքներից մեկն է:

Գոշն արդարացի էր համարում միայն այն պատերազմը, որը մղվում է օտարի հարձակումից հայրենիքն ու հարազատ ժողովրդին պաշտպանելու նպատակով: Մխիթար Գոշի գրչին են պատկանում մատենագրության զանազան ճյուղերին վերաբերող մոտ մեկ տասնյակ աշխատություններ[2]:

Առակագիրքը շոշափում է սոցիալական խնդիրներ, որով նրա ժողովածուն առանձին կարեւորություն է ստանում ժամանակի սոցիալ-պատմական իրադարձության պարզաբանման համար: Մի շարք առակներում երևում է հասարակական շերտավորումը և սոցիալական պայքարի առկայությունը: Մարդիկ դատում ու դատապարտում են իշխաններին, տրտնջում թագավորներից, նույնիսկ՝ Աստծուց: Սակայն, հեղինակի կարծիքով, ժողովուրդը պետք է հնազանդվի ներքին իշխողներին, քանզի վերջիններս պարտավոր են նրան պահպանել օտար կեղեքիչներից ու վտանգից: Մխիթար Գոշը ձգտում է մեղմելու մի կողմից՝ հնազանդյալների ու տերերի հակամարտությունը, մյուս կողմից՝ աշխարհիկ ու հոգևոր իշխողների հակասությունները՝ ազգային ուժերը դիվանագիտորեն համախմբելու և արտաքին թշնամու դեմ կենտրոնացնելու նպատակով, մի նպատակ ու

---

[1] *Առակներ: Տեքստը ձեռագրերի համեմատությամբ և ներածությունը՝ Էմ. Պիվազյանի. Ե., 1951: Գիրք Դատաստանի (աշխատասիր. ՝Խ. Թորոսյանի), Երևան, 1975:*

[2] ***Աբեղյան Մ,*** *Երկեր, հատոր 4. Ե, 1970: Երկ. Կաթողիկոսք եւ դէպք Աղուանից աշխարհին ի մէջ ԺԲ դարու, տե՛ս Ալիշան Դ, Հայապատում, մաս 2, Վնտ., 1901:*

պահանջ, որով պայմանավորված էր նաև նրա «Դատաստանագրքի» երևան գալը: Առակներում ևս Գոշը կենտրոնացած, ուժեղ պետականության գաղափարն է արծարծում: Այստեղ այլաբանորեն կոնկրետ մարդն է նկարագրվում իբրև գյուղացի, քաղաքացի, ազնվական-իշխան, արհեստավոր, կրոնավոր, թագավորը՝ իր կեցության առանձնահատկություններով: Մխիթար Գոշն իր ժողովածուն կազմել է ուսուցողական նպատակով: Նրա համար առակը ճարտասանության, հրապարակախոսության միջոց է, որն օգնում է նրբանկատորեն դրվատելու առաքինությունները և ծաղրելու պակասությունները[1]: Նրա երկերը պարունակում են բանակցային արվեստում օգտագործվող բազմաթիվ կարևոր դարձվածքներ, իսկ ժողովրդի, երկրի և պետության շահերի գիտակցումը մինչ օրս տնտեսական դիվանագիտության շարժիչ գործոններից են:

Տնտեսական դիվանագիտության ասպարեզում ներդրած ավանդի տեսանկյունից մյուս հայտնի մտածողներից է եղել **Հովհաննես Երզնկացին**: Հարկ է նկատել, որ սոցիալական արդարության սկզբունքը երկրի ներսում և արտաքին հարաբերություններում որոշիչ ազդեցություն է ունեցել հանրության զարգացման գործընթացների վրա: Դրա բացակայությունը Հայաստանում միջին դարերում, ինչպես նաև այն մեղսավոր կյանքը, որ վարում էին հավատացյալները, և այն կյանքը որ նրանք պետք է վարեին համաձայն քրիստոնեական ուսմունքի, ծնել էին լուրջ մտահոգություններ: Միջնադարյան մտածող մարդը չկարողացավ հասկանալ այն, քանի որ անհասկանալի էր Աստծո դերը, բազմաթիվ հակասական մտքերի պատճառով: «Ինչու է Աստծո կամոք ուժը տրվում խելացի մարդու, եթե նա բարի է ու գիտի, որ դրանից մարդկանց ոչ մի ոգուտ չի տրվելու», հարցրել է բանաստեղծ և փիլիսոփա Հովհաննես Երզնկացին (1230-1294թ.): Նրա կարծիքով՝ կյանքն արդարացի չէ, այն անհավասար է և անհարթ: Խելացիները չեն բավարարվում ինքնազարգացումից: Սրբության պահապանները տուժում են անարդարությունից, իսկ խելացիներն ու անարդարները հաճույք են ստանում փառքից և ժառանգում են իշխանությունը, որն ամրացնում է նրանց դիրքերն ինչպես երկրի ներսում, այնպես էլ այլ պետությունների հետ հարաբերություններում[2]:

Հովհաննես Երզնկացու խոսքերը բնութագրում են նրան որպես մարդ, որ սուր արձագանքում է ցանկացած անարդարության: Միջին դարերում գիտական, փիլիսոփայական փորձերը՝ բացատրելու աշխարհը, բերեցին պոեզիայի վերելքին: Գիտությունը իր գոյության սկզբնական շրջանում հավասարակշռում է պոեզիայի ժամանակավոր բացակայությունը:

---

[1] ***Սամվելյան Խ.*** *Մխիթար Գոշի Դատաստանագիրքն ու հին հայոց քաղաքացիական իրաւունքը. Վեն , 1911:*

[2] *Խրատ բոլոր քրիստոնեաներուն, Անթիլիաս, 1984, էջ 155; Բանք չափավ, Երևան, 1986, էջ 291-302:*

Փորձելով հասկանալ և բացատրել մարդկանց և պետությունների միջև հարաբերություններում ժամանակ առ ժամանակ փոփոխվող երանգները՝ Հովհաննես Երզնկացին իր փիլոսոփայական երկերում կարևոր բացահայտում է անում՝ նշելով, որ Աստված ստեղծել է բոլոր շոշափելի և զգայական առարկաները ջրի հիմքով: Սա մի պնդում է, որ դարեր անց գիտնականներն ապացուցեցին ժամանակակից սարքավորումների և տեխնոլոգիաների շնորհիվ:

Ընդանիրապես Հովհաննես Երզնկացին մեծ նշանակություն էր տալիս գիտակցության զգացմունքային հենքին: Նրա համոզմամբ, ողջ աշխարհը թափանցում է մեր միտքը՝ զգայական օրգանների միջոցով[1]: Կարելի է ասել, որ Հովհաննես Երզնկացին իր փիլիսոփայական երկերում մնում էր բանաստեղծ, որը սակայն չէր նսեմացնում նրա գիտական մտքի արժեքը: Պետք է նկատել նաև, որ իր գիտական, խոհա-փիլիսոփայական ստեղծագործություններից շատերը ներկայացվում են բանաստեղծական ոճով:

Մեր աշխարհը նման է անիվի. ճակատագիրը մեկ վեր, մեկ վար է անում: Այդպես են և բազմաթիվ պետություններ. Նրանք, որ իշխում էին շատերին, հետագայում թուլանում են, իսկ ոմանք՝ նույնիսկ կործանվում: Մյուսները, որ երկար ժամանակ եղել են այլ պետությունների լծի ներքո, հզորանում և ընդարձակում են իրենց ազդեցության ոլորտները: Այս դրույթներն իրականում շատ կիրառական են հարափոփոխ աշխարհում ինչպես դիվանագիտության, այնպես էլ, ավելի նեղ առումով՝ տնտեսական դիվանագիտության մեջ:

Նա հիմնականում իր աշխատություններում խոսում է նաև կյանքի իմաստի և ճակատագրի կանխագուշակման մասին[2]:

Հովհաննես Երզնկացին եղել է լայն համամարդկային հայացքների տեր մտավորական, օտար հավատքի նկատմամբ խորին հարգանքով՝ ձերբազատվելով միջնադարյան անհանդուրժողականությունից դեպի այլ ազգեր ու պետություններ: Նա ստեղծել է հավաքական ժամանցային գիրք՝ տարբեր կրոններ դավանող փիլիսոփաներից, բայց մեծ մասամբ, նա օգտվում էր արաբական փիլիսոփաների մտքերից:

Տնտեսագետների համար կարևոր է իմանալ, որ Հովհաննես Երզնկացու աշխատություններում կան որոշակի կանոններ և ուղղություններ, օրինաչափություններ, որ կարևոր են հարգանքով վերաբերվելու և սովորելու տարբեր մարդկանցից՝ անկախ նրանց ազգային պատկանելությունից, չնայած նրան, որ միջին դարերում եկեղեցու ներկայացուցիչները մարդկանց սրտերում արթնացնում էին թշնամանք այլ

---

[1] *Վիպասանութիւն զերկնային մարմնոյ շարժմանէ, Նոր Նախիջեւան, 1792, էջ 75-81:*

[2] *Հաւաքումն մեկնութեան քերականի, Լոս Անճելիս, 1983, 392 էջ; Խրատ բոլոր քրիստոնեաներուն, Թեհրան, 2002, էջ 114:*

հավատքի և այլ ազգությունների հանդեպ[1]: Սա է պատճառը, որ կրոնն ու ծայրահեղացված ազգայնականությունը առաջացրել են սուր խնդիրներ միջին դարերում, բայց առավելությունը Հայաստանում այն էր, որ գրողները և հասարակական գործիչները իրենց մտքերով, խոսքով և աշխատություններով կրոնական հանդուրժողականություն էին քարոզում, ինչպես նաև հավասար իրավունքներ՝ տարբեր ազգային ներկայացուցիչների հանդեպ[2]: Մասնավորապես Հովհաննես Երզնկացու աշխատություններից մեկում ներկայացված է, որ կրոնական և ազգային պատկանելությունը չի կարող պատնեշ լինել մարդկային հարաբերությունների համար: Հենց այս համոզմունքն էլ հիմք է հանդիսանում ազատ հարաբերվելու և բանակցելու այլ պետությունների ներկայացուցիչների հետ, առևտրային և տնտեսական կապերում մոտեցումները կառուցելու փոխադարձ հարգանքի և վստահության վրա:

Այսպիսով՝ պատմական Հայաստանի հայ իմաստասերների, անվանի մտածողների կյանքի և ստեղծագործությունների ուսումնասիրությունը վկայում է, որ ժամանակակից աշխարհում օրըստօրե կատարելագործվող տնտեսական դիվանագիտության ուղղություններն ու գործիքներն իրենց արմատներով գնում են դարերի խորքերը: Ավելին՝ դրանք բազմաբնույթ կիրառություն են ունեցել պետական այրերի կողմից, ինչպես նաև օգտագործվել են օտար պետություններում և հանգեցրել շոշափելի արդյունքների: Հետևաբար ներկայումս նպատակահարմար է ավելի խորն ուսումնասիրել սեփական պատմական փորձը և այն տեղայնացնել թվայնացման և տեխնոլոգիական նոր հեղափոխության մարտահրավերների դարաշրջանում՝ Հայաստանի, Արցախի և Սփյուռքի բազմաթիվ խնդրների արդյունահվետ հանգուցալուծման նպատակով:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, տ.գ.թ. Ծ.Ծ.Ասրյանը:

---

[1] *Ի տաճկաց իմաստասիրաց գրոց քաղեալ բանք, Երևան, 2009, 144 էջ; Յովհաննէս Երզնկացի Մատենագրութիւն, Երեւան, 2013, 668 էջ:*

[2] *Ա. Սրապյան, Հովհաննես Երզնկացի: Հայ մշակույթի նշանավոր գործիչները. V-XVIII դարեր, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, էջ 330-339; Հայկական սովետական հանրագիտարան, հատոր 6, Հովհաննես Երզնկացի, Երևան, 1980, էջ 559-560; Հայկական համառոտ հանրագիտարան, հատ. 3, Հովհաննես Երզնկացի, Երևան, 1999, էջ 382-383:*